անմիջապէս առանձին պատուիրակութիւն ուղարկուեց Բաթում յանձինս Յ. Քաջազնունու, Մ. Պապաջանեանի և Ա. Խատիսեանի՝ տալով նրանց արտաքին կարգ լիազօրութիւններ բանակցութիւններ վարելու տաճիկ պատուիրակութեան հետ:

Մեր պատուիրակութիւնը յաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց և այնպէս ստիպուած էր ընդունել վերջնագիրը և խաղաղութեան դաշինք կնքել Վեհիբ փաշայի և Խալիլ բէյի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչուեցին իբրև ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և ստորագրեցին յունիս 4-ի դաշինքը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային, Բուլգարիային: Պոլսում է մեր երկրորդ պատուիրակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը և Մ. Պապաջանեանը, որոնք ուղևորուել են այնտեղ օսմանեան կառավարութեան հրաւէրով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բաղմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը և այն հանգամանքները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, և միւս կողմից՝ քաղաքական և տնտեսական ստեղծուած դրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը սեղմեց իր սիրտը և անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը և ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկուել է իր ամենաղնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը և, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հաւատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակուեն կեանքի երկաթէ ուժով, մեր արդար և անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ դրաւած հողամասերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնութեան և խաղաղութեան ուղին, և ուզում եմ յուսալ, որ չենք սխալուում:

Մինչ այդ, մենք կը կատարենք սրբութեամբ և անշեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բխում են խաղաղութեան դաշինքից: Թողնե՛նք ապագայ հեռանկարները, յամենայն դէպս, այսօր այստեղ առանց տատանումների և լիակատար վճռականութեամբ մենք դցում ենք խարիսխը մեր պետական նաւի և դնում ենք հիմքը պետական շէնքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իբրև զաւակների մէկ հարազատ մայր հայրենիքի»:

Սահակեանի ճառը լսեց խորը յուզումով: Պատգամաւորներն ու հասարակութիւնը, յաճախ, ընդհատում էին նրան բուռն ծափահարութիւններով:

Երբ, իր խօսքն աւարտելուց յետոյ, Սահակեանը արտասանեց՝ «Յայտարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացուած», — դուրսը, Խորհրդարանի շէնքի գլխին, բարձրացաւ Հանրապետութեան եռագոյն դրօշակը և հազարաւոր բերաններ որոտացին՝ «կեցցէ՛»: Ծափահարութիւնները թնդացրին օդը: Հնչեց «Մեր Հայրենիք»-ը: Զօրքը պատուի կեցաւ: